***

ԱԼԱՓԱՐՍԻՑ Պ. Սարգիս Փիլոյեանցը մեզ գրում է «Ալափարս գիւղի երիտասարդ Խորէն քահանայն Զալալեանց ազնիւ զգացմունքէ շարժած, գեղեցի՜կ գործունէութեամբ կպարապի, այն է իր պարապ ժամերը իզուր չանցնելու մտօք իր սենեկին մէջ քառասնաչափ օրիորդք ժողոված ձրիաբար կդաստիարակէ նորանց. Աւանդելի դասերն են Կրօնի, Ընթերցանութիւն, Վայելչագրութիւն և Երգեցողութիւն. ութ ամսէ ի վեր սկսածէ և ցարդ աշխատութեամբ շարունակում է, գովելու արժանի՜ ձեռնարկութիւն. Խորհուրդ կուտայինք մեր քրոջ — յիշեալ քահանայի համեստափայլ տիկնոջ, որ օրական մի ժամ ևս նա իր կողմից նուիրէր աշակերտուհեաց հետ ասղնագործութեամբ պարապելուն. որով այր և կին ազգութեան անդաստանի մէջ ծառայելով, ազգի ապագայ մայրերուն մի բաժակ ուսման ցուրտ ջուր շնորհելով անշուշտ առանց վարձուց չեն մնալ.

Գովումենք յիշեալ քահանայի եռանդն ու աշխատութիւնը։

***

ՇԱՄԱԽՈՒՑ Պ. Շիրուանցին մեզ գրում է «Չգիտեմ Մշակի որ համարի մէջ կարդացի, որ Պ. Նաջարեանցը նուիրել է . . . մի արձանին 1 ր. . Արդեօք աւելի լաւ չէ՞ր լինի, եթէ պ. Նաջարեանցը իւր դրամները փոխանակ այդ տեսակ բաների վերայ գործ դնելու, իւր և իւր եղբարց վերայ ծանրացած Շամախւոյ Հոգևոր Թեմ. Դպրոցի 2000 րուբլի պարտքը վճարէր, որը 6—7 տարի շարունակ առանց տոկոսի իւրեանց մօտ պահելով, զրկել են Շամախւոյ բազմաթիւ Հայ մանուկներին մտաւոր կերակուրից — ուսումից. Մենք զարմանում ենք մեր Առաջնորդ Եպիսկոպոսի բռնած դիրքին և անտարբերութեան վերայ. մի՞թէ նա չէր կարող այն 120 րուբլին, որը ահա հինգ տարի շարունակ մեր աղքատ վիճակի կոնսիստորիայի գանձարանից վճարւում է Պ. Նաջարեանցին իբրև սորա տան վարձ, որի մէջ ինքը բնակւում է, Թեմական դպրոցի պարտքին հաշուէր, որով այս հինգ տարուայ ընթացքում գոնէ յիշեալ դպրոցի 600 րուբլին սաղացրած կլինէր..»

---

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՇՈՒԵՑՈՒՑԱՆ ՄՏԻՑ ԵՒ ԾԱԽՈՒՑ ԴՈՒՄԱՐԱՑ ԱՍՏՐԱԽԱՆԱՑ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԵՐԿՈՒՑ ՍԵՌԻՑ ԴՊՐՈՑԱՑ. ՔԱՂԵԱԼ Ի ԺԱՊԱՒԻՆԵԱԼ ՏՈՒՄԱՐԷ 1881 ԱՄԻ.

| ՄՈՒՏՔ. | ր——բ. | կ——. |
|---|---|---|
| Մնացորդ պատրաստական դրամք ի 1879 ամէ . . . | 605 | 19 |
| Մ——տ 1880 ——ի. | | |
| Գանձանակագրամք ժողովեալք յեկեղեցիս Աստրախանայ . | 108 | 73 |
| Արդիւնք որոշեալ ի գումարոց Եկեղեցեաց Աստրախանայ . | 2996 | 50 |

| | | |
|---|---|---|
| Նուիրադրամք Յովհաննու Գրիգորեան Սարգսեանց . . | 100 | » |
| Մի Դրամատոմսակ Աստրախանայ Հասարակական Դրամատան տուեալ ի 5 Մարտի 1880 ամի համար 1053 գումարու . | 100 | » |
| Նուիրադրամք բարերար անձանց . . . . . | 486 | » |
| Դրամք վաճառեալ ձեռագործութեանց աշակերտուհեաց . | 92 | 50 |
| Դրամք վաճառեալ դասագրեանց . . . . . | 36 | 15 |
| Տոկոսադրամք Սեմինարիական և Դպրոցական Դրամատոմսակաց | 1218 | 30 |
| Դրամք որոշեալք ի գումարաց տնանկաց Հայոց Աստրախանայ ի գին զգենլեաց և ագանելեաց յոյժ չքաւոր ուսանողաց . | 50 | » |
| Կիսամեայ տոկոսիք Կտակուանդ գումարի հանգուցեալ Խօջամալեանց . . . . . . . . | 82 | 50 |
| Մի Դրամատոմսակ Աստրախանայ Հասարակական Դրամատան տուեալ ի 23 յունիսի 1880 ամի համար 1116 գումարու . | 500 | » |
| Տուրք ուսման երկսեռ աշակերտաց. . . . . | 75 | » |
| Դրամք գոյացեալ ի վաճառից միոյ անպիտանացեալ սանի . | 2 | 88 |
| Տարեկան Կապալադրամք Նուիրեալ ի Ղօրղանեանցէ գետնոյ . | 50 | » |
| Դրամք որոշեալք յարդեանց կրպակաց Թովմայի Դաւթեանց . | 200 | » |
| Դրամք գոյացեալ ի վաճառից փայտեայ շինուածոց ի սրահի Օրիորդաց Դպրոցի . . . . . . | 510 | » |
| Գումար | 7213 | 75 |

ԾԱԽՔ

| | | |
|---|---|---|
| Հատուցաւ գետնահարկ Նուիրեալ գետնոյ Կալէյեանց վասն 1879 և 1880 ամաց . . . . . . . | 47 | 44 |
| Բաշխեցան ռոճկադրամք Ուսուցչաց, Վերակացուաց և պահպանողաց . . . . . . . . . | 3702 | 16 |
| Առաքեցան յԱստրախանայ Հասարակական Դրամատունն Նուիրադրամք Պ. Յովհաննու Սարգսեանց վասն ստանալոյ զմի դրամատոմսակ . . . . . . . | 100 | » |
| Մատուցաւ վիճակին Կոնսիստորիային Աստրախանայ վերոյիշեալ դրամատոմսակն . . . . . . | 100 | » |
| Առաքեցան յԱստրախանայ Հասարակական Դրամատուն ի պատրաստի դրամոց Դպրոցաց վասն ստանալոյ զմի դրամատոմսակ . . . . . . . . | 500 | » |
| Տուաւ ռոճիկ աղախնոյ Օրիորդաց Դպրոցի . . . | 23 | 33 |
| Վճարեցաւ ի տարեկան գին Голосъ և Семья и Школа լրագրոյ 1880 ամի . . . . . . . . | 22 | 47 |
| Ի գին վառելափայտի . . . . . . | 268 | 70 |
| Ի վարձ գիշերապահի փողոցի Օրիորդաց Դպրոցի և Նուիրեալ գետնոյ Կալէյեան և Ղօրղանեան . . . . | 28 | 40 |

Ի գին կաւճի, թաղիքի, թանաքի, քարէտախտակաց, քարէ-

| | | |
|---|---|---|
| գրչաց, սղոցի, թղթոց, ի վարձ մաքրութեան ծխնելուզաց և ի պէտս այլոց կարեւոր իրաց . . . . | 104 | 69 |
| Ի վերանորոգութիւն Դպրոցաց ի ներքուստ և յարտաքուստ յօդ. 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 185, և 157 . . . . . . | 450 | » |
| Հատուցաւ ի գին 12, հատ աթոռոց ի պէտս Դպրոցաց . | 15 | » |
| Հատուցաւ ի վարձ մաքրութեան արտաքնոցի Օրիորդաց Դպրոցի . . . . . . . . | 10 | » |
| Ծախեցան վասն հիւրնկալութեան բարերար անձանց յաւուր տօնի Սրբոց Վարդանանց զօրավարաց Հայոց . . . | 10 | » |
| Ի գին կօշկաց և հանդերձից յոյժ չքաւոր ուսանողաց . . | 19 | 43 |
| Ի գին դասագրեանց և այլ կարեւոր ուսումնական պիտոյից . | 9 | 30 |
| Ի վարձ ժամագործի Անդրէյովի . . . . . | 5 | 50 |
| Հատուցաւ ի վարձ կազմարարի . . . . . | 17 | » |
| Ի գին Օղահանից ի պէտս Օրիորդաց Դպրոցի . . . | 21 | 25 |
| Ի գին ջրոյ և ի վարձ լուացման Սենեկաց Օրիորդաց Դպրոցի . | 27 | » |
| Հատուցաւ վասն ապահովելոյ ի հրկիզութենէ զտուն Օրիորդաց Դպրոցի . . . . . . . | 51 | 56 |
| Վճարեցան հարկադրամք նուիրեալ գետնոյ Լօրղանեանց վասն 1878, 1879, և 1880 ամաց . . . . . | 7 | 72 |
| Հատուցաւ խմբագրութեան Աստրախանաց «Լիստոկ» լրագրի վասն հրատարակելոյ զվաճառումն փայտեայ շինուածոց ի սրահի Օրիորդաց Դպրոցի աճրդախօսութեամբ . . | 10 | 80 |
| Առաքեցաւ ի Նահանգային կառավարութիւնն Աստրախանայ վասն հրատարակելոյ ի Նահանգային լրագրի զվաճառումն փայտեայ շինուածոց ի սրահի Օրիորդաց Դպրոցի . . | 5 | » |
| Գումար | 5.556 | 75 |

Զտարեկան ծախս ի բաց բառնալով ի տարեկան մտից՝ մնան առ 1-ն յունվարի 1881 ամի մի Դրամատոմսակ Աստրախանայ Հասարակական քաղաքային Դրամատանցի գումարաւ 500 րուբլի, և պատրաստի դրամք 1157 րուբլի, ընդ ամէնն 1657 րուբլի արծաթի.

Ազգիս Վեհափառ Հայրապետը Յուլիսի 1ից մինչեւ Սեպտեմբերի 14 բարեհաճեց արձակել հետեւեալ Կոնդակները։

Կոնդակ օրհնութեան և հաստատութեան յանուանս Աւետիս պէկի Մելիք-Հայկազեանց, Աւետիս պէկի Խուդլարեանց, Առաքելի Խաչատրեանց, Աղէքսանի Գափեանց, Բաղապէկի Թուլփպէկեանց և Ներսեսի Տէր